ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար համազգեստի ձեռքբերման նպատակով
կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/25» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«27» հոկտեմբերի 2021թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Լևոն Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Հարություն Դավթյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Արթուր Հարությունյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Լևոն Դավթյան՝ Դատական կարգադրիչների ծառայության Արագ արձագանքման և վերլուծական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի հաշվապահական հաշվառման վարչության առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/25» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի, ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՉՅԱՆ ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն, ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՉՅԱՆ ԱՁ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի, ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՉՅԱՆ ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտի և ընթացակարգը 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 3-րդ չափաբաժնի մասով «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից.
- 6-րդ, 7-րդ չափաբաժինների մասով ԳԱՅԱՆԵ ՂԱՋԱՋՅԱՆ ԱՁ-ին հայտարարել ընտրված մասնակից:

2.2. 2-րդ չափաբաժնի մասով՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գինը գերազանցել է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գինը, ուստի նշված չափաբաժնի մասով ներկայացված հայտը Համակարգի կողմից համարվել է մերժված, իսկ 1-ին, 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով ոչ մի հայտ չի ներկայացվել: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա.

- գնման ընթացակարգը 1-ին, 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լևոն Հովհաննիսյան

Անդամներ՝

_____ Հարություն Դավթյան

_____ Արթուր Հարությունյան

_____ Լևոն Դավթյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝

_____ Գայանե Դադիվանյան